**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ N 1**
**N ԳՀԱՊՁԲ-21-10/1-5 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան «14» 04 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ա.Սահակյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՌՈՒԲՇԻՆ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Զաքարյանի, ով գործում է «ՌՈՒԲՇԻՆ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **15.02.2021թ.** կնքված N **ԳՀԱՊՁԲ-21-10/1-5** գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը (ֆինանասական միջոցները նախատեսվել են ՀՀ կառավարության 30.12.2020թ. N 2215-Ն որոշմամբ, Ծանուցում N 7-ՊՆ 06.03.2021թ), փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով շինանյութերի (այսուհետ՝ Ապրանք) գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն N 1 և N 2 Հավելվածների:

1.2 Վաճառողը պարտավորվում է Գնորդի հանձնարարությամբ մատակարարել Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխանող Ապրանք՝ Համաձայնագրի N 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցով նախատեսված ծավալներով և ժամկետներում, իսկ Գնորդն պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ Համաձայնագրի N 2 Հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում:

## 2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Համաձայնագրով Վաճառողի մատակարարման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է **320 000 /երեք հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդն նվազեցնելու այդ գինը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, այն ստորագրվելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում՝ Համաձայանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և եռամսյակներում, բայց ոչ ուշ, քան մինչև 10.12.2021թ.:

## 3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված մյուս դրույթները թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագրում և Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի և Պայմանագրի անբաժանելի մասը:

3.4 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3.5 Համաձայնագրով նախատեսված՝ ապրանքների մատակարարման դեպքում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչությունը:

## 4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Գ Ն Ո Ր Դ | Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ՌՈՒԲՇԻՆ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ |
| ք. Երևան, Բագրևանդի 5 | ք.Երևան, Լենինգրադյան փ. 31/1, բն. 42 |
| ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն | «Այ Դի Բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144879 | Հ/հ 11817071605400 |
| ՀՎՀՀ 02522167 | ՀՎՀՀ 01306961 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | Տնօրեն |
| Ա. ՍԱՀԱԿՅԱՆ | Ա. ԶԱՔԱՐՅԱՆ |

**Հավելված N 1**
**N ԳՀԱՊՁԲ-21-10/1-5 պայմանագրի**
**N 1 Համաձայնագրի**

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/հ | CPV կոդ | անվանումը | Չ/մ | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | հասցեն | ենթակա քանակը/ժամկետը | |
| | | | | | | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ |
| 1 | 42131110/501 | կենտրոնական ջեռուցման ռադիատորների փականներ (Ջեռուցման մարտկոցի փական) | հատ | 1600 | 320000 | 200 | ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչության կենտրոնական պահեստ՝ Արշակունյաց 135 | - | 200 |

**Հավելված N 2**
**N ԳՀԱՊՁԲ-21-10/1-5 պայմանագրի**
**N 1 Համաձայնագրի**

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքների | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Հ/հ | CPV կոդ | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ.-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում՝ | | | |
| | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ. | Ընդամենը |
| 1 | 42131110/501 | կենտրոնական ջեռուցման ռադիատորների փականներ (Ջեռուցման մարտկոցի փական) | - | 320000 | 320000 | 320000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**Գ Ն Ո Ր Դ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**

«ՌՈՒԲՇԻՆ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ-ի տնօրեն
Ա. ԶԱՔԱՐՅԱՆ